ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022 թվականի N 781-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2022 թվականի օգոստոսի 25-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի տեխնիկական և սպասարկող անձնակազմի գործավար Ստելլա Հարությունյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 25
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի ղեկավարի ժ/պ
<<25>> օգոստոսի 2022թ.
թիվ 781-Ա որոշմամբ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1.	Սաֆարյան Սուրեն	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
2.	Սարգսյան Նաիրա	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
3.	Մկրտչյան Կարեն	Համայնքի ղեկավարի խորհրդական	Արմավիրի համայնքապետարան
4.	Մկրտչյան Խաչատուր	Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ	Արմավիրի համայնքապետարան
5.	Հովհաննիսյան Դավիթ	Արմավիր համայնքի ավագանու անդամ	Արմավիր համայնքի ավագանի
6.	Մարգարյան Սուսաննա	Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական գծով փոխտնօրեն	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ